



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

9 փետրվարի 2018թ. թիվ 12

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.18 կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի փետրվարի 2-ի թիվ 8 կարգադրությունը և հաշվի առնելով Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի 07.02.2018թ. նիստի թիվ 1 արձանագրությամբ տրված հանձնարարականը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ եմ.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության և սոցիալական ներառման ուղղությամբ մարզում կատարված աշխատանքներն ամփոփելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

1) Եռամսյակային պարբերականությամբ, ըստ բնագավառների, հավաքագրել պահանջվող տեղեկատվությունը և անհրաժեշտության դեպքում տրամադրել համապատասխան խորհրդատվություն:

2) Մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 26-ը ամփոփել ստացված տեղեկատվությունը և ներկայացնել հաշվետվություն:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2018թ. փետրվարի 9  
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ